թիւնը հարստութեան հետ մէկ տեղ Հայոց ձեռք եղած միջոց, չէն և բարօրութեան մէջ էր Փոտոլիա, այլ երբ վաճառականութիւնն տակաւ Հրէից ձեռքը կ'անցնի՝ Լեհք և Հայք 'ի միասին կը սնանկանան.

1672 ին Մէհմէտ Դ. Կամենիցի տիրելով, Հրեայք՝ որոց արգիլուած էր 'ի Լեհաց Կամենիցի մէջ հաստատուն գործ բռնել, կամաց կամաց ոտից կոուան կը գտնան. 1699 ին երբ Ցաճիկք դարձեալ Լեհաց թողլով զԿամենից կը հեռանան, Հրեայք ամենայն ջանք կը բանեցընեն մէջ մնալու, և իրենց նպատակին հասնելու՝ փող չեն խնայեր. 'ի զուր կը բողոքեն Հայք, գուշակելով զապագայն: Տակաւ կը տեղաւորին Հրեայք, և ըստ տեղւոյն ստրկաբար խոնարհելով, և այլ երբեմն դաւով և խարդախութեամբ կամաց կամաց ցանցերը կու սփռեն, վաճառականութեան ձեռք կը զարնեն. Հայք կամայ և ակամայ տեղիք կու տան, և Լեհ աղնուականաց օրինակին հետևելով գեղերը կը քաշուին: Ցայսմ ևս կը յաջողին և ըստ վկայելոյ Անտոնիի, խելացի տնտեսութեամբ, չափաւորեալ կենաց, իրենց ձեռքը կը հաւաքեն հարաւային – արեւմտեան Լեհաստանի գրամագլուխը. Նոցա ճոխութեան անունը 'ի հեռաւոր տեղեր կը հռչակուի. և Փոտոլիոյ բերք և ապրանք «Վաճառք Հայոց» անունը կը կրէ, Ժէ դարէ սկսեալ, որում կը վկայեն մաքսատանց մատեանք: Այլ տակաւ Հայք Լեհաց ձևոյն և օրինակին հետևելով, կամաց կամաց ամուսնութեամբ խառնուելով, և ամբողջ մի տեղւոյ վրայ (այսինքն Կամենիցի մէջ) միութիւն և ամփոփութիւننին քակուելով, ցիր և ցան կալուածներու և գեղերու մէջ, կը խառնուին Լեհաց